ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 9

«05» փետրվարի 2019 թվական գյուղ Մայիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ (ԲՆԱԿԱՎԱՅՐ՝ ՄԱՅԻՍՅԱՆ) 08-077-0105-0002 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.107304 ՀԵԿՏԱՐ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ «ՍԱՄՈ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 2-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2000 թվականի մայիսի 20-ի թիվ 21 որոշմամբ (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի 14.06.2017. թիվ Ի-1255 արխիվային տեղեկանքը), Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի N 599 որոշմամբ ստեղծված հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 142 դրական եզրակացությունը և հաշվի առնելով «ՍԱՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրենի 2019 թվականի հունվարի 15-ի դիմումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է

1.«ՍԱՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի Մայիսյան բնակավայրի, 1-ին փողոց, թիվ 48/1 հասցեում կառուցված հանրային սննդի օբյեկտի պահպանման ու սպասարկման համար նախատեսված համայնքի սեփականություն հանդիսացող 08-077-0105-0002 կադաստրային ծածկագրով **0.107304** հեկտար բնակավայրի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման

արտառնական նշանակության հողամասը ուղղակի վաճառքով, տվյալ հողի գնահատական գնի չափով, մեկ քառակուսի մետրը՝ 342 (երեք հարյուր քառասուներկու) ՀՀ դրամ արժեքով, 0.107304 հեկտար հողամասի համար՝ 366980 (երեք հարյուր վաթսունվեց հազար ինը հարյուր ութսուն) ՀՀ դրամ, վաճառել «ՍԱՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (Վկայական N 038898):

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ղեկավար Կարեն Արշակյանին՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով «ՍԱՄՈ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքել սույն որոշման 1-ին կետով նախատեսված հողամասի առուվաճառքի պայմանագիր և ապահովել անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Կողմ՝	*Դեմ՝*	*Չեռնպահ՝*
ՄԱՆՈՒԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	v		
ԼՈՒՍԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆ՝	v		
ՀԱՄԼԵՏ ԳԵՎՈՐԳՅԱՆ՝	v		
ԱՐՏՅՈՄ ՋԱՔԱՐՅԱՆ՝	v		
ՄԱՎԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ՝	v		
ՍԻՎՈՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ՝	v		
ԳԱՐԵԳԻՆ ՄԿՐՏՉՅԱՆ՝	v		

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ԱՐՇԱԿՅԱՆ

« » փետրվարի 2019 թվական
գյուղ Մայիսյան